ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-23/49

ք. Երևան «20» 03 2023 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ.Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս ի դեմս կորպորատիվ վաճառքի վարչության ղեկավար Դ. Միրաքյանի, որը գործում է գլխավոր տնօրեն Արա Խաչատրյանի կողմից տրված լիազորագրի (տրված 08.04.2022թ.) հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ընտրությունների քվեարկության ընթացքի և արդյունքների ամփոփման գործընթացի, ինչպես նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի, վերահաշվարկի տեսանկարահանման և միաժամանակյա համացանցային հեռարձակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _2_ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 48 068 560 (քառասունութ միլիոն վաթսունութ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը վճարում է Կատարողին՝ վերջինիս կողմից արխիվացված նյութերը և ապամոնտաժված սարքավորումները Պատվիրատուին հանձնելուց հետո, իսկ մնացած գումարը վճարում է սույն պայմանագրով սահմանված ընտրությունների ավարտից հետո՝ սույն թվականի մարտի 28-ից հաշվարկած հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո սույն գլխով սահմանված ժամկետներում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	Յուքոմ ՓԲԸ
Ք.Երևան, Կառավարական տուն 1	Ք,Երևան, Դավիթ Անհաղթի 8/4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 9000011042679	Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ՝ 00024873
.....	.....
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 1
«20» 03 2023թ. կնքված
ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-23/49 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմ ան (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
1	72311240/2	Տվյալների փոխանցման ծառայություններ՝ համաձայն Աղյուսակ 1-ի	դրամ	48 068 560	1	Ըստ պատվիրատուի կողմից տրամադրված հասցեների (համաձայն Աղյուսակ 1-ի)	համաձայն Աղյուսակ 1-ի

Աղյուսակ 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մարտի 26-ին կայանալիք Շիրակի մարզի Անի և Սյունիքի մարզի Սիսիան համայնքների ավագանիների ընտրությունների գործընթացի հրապարակայնությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընտրական տեղամասերից (այսուհետ՝ տեղամաս) իրականացնել ընտրությունների քվեարկության ամբողջ ընթացքի և արդյունքների ամփոփման գործընթացի, ինչպես նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ ԸԸՀ) նիստերի և վերահաշվարկի տեսանկարահանում միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում (այսուհետ՝ առցանց ուղիղ հեռարձակում), և տեսագրում:

Թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է 26.03.2023թ. ընտրությունների ընթացքում, թվով 61 տեղամասերում և թվով 2 ԸԸՀ-ներում տեղադրել անշարժ տեսախցիկներ, որոնցով կիրականացվի տեսանկարահանում և առցանց ուղիղ հեռարձակում, ինչպես նաև կիրականացվի տեսագրում կենտրոնացված պահոցի վրա:

Այս փաստաթուղթը նկարագրում է 2023 թվականի մարտի 26-ին կայանալիք Շիրակի մարզի Անի և Սյունիքի մարզի Սիսիան համայնքների ընտրությունների ընթացքում 61 տեղամասերում և 2 ԸԸՀ-ներում տեսանկարահանման և առցանց ուղիղ հեռարձակման համակարգի նախապատրաստման և իրականացման պահանջները:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Տեղամասերից քվեարկության ամբողջ ընթացքի և արդյունքների ամփոփման գործընթացի, ինչպես նաև ԸԸՀ-ների նիստերի և վերահաշվարկի տեսանկարահանման առցանց ուղիղ հեռարձակման և տեսագրման համակարգը բաղկացած է հետևյալ հիմնական մասերից.

1. **Անշարժ տեսախցիկ և հարակից սարքեր.** Պատվիրատուի կողմից տրամադվող թվով 63 հատ Avigilon H4SL-B01-IR տեսախցիկ՝ համալրված **1Գբ/վ թողունակությամբ** PoE հոսանքի ինժեկտորներով, որոնք պետք է մոնտաժվեն՝ սույն պայմանագրի հավելվածում նշված տեղամասերում և ԸԸՀ-ներում: Կատարողը պետք է տեսախցիկները համալրի **32Գբ ծավալով MicroSD տեսակի ներքին հիշողության սարքերով**, որոնք թույլ կտան ապահովել պահուստային տեսագրություն տեսախցիկի մեջ: Զուգահեռ դրան տեսախցիկներից

ստեղծվում է ուղիղ տեսահոսք, **որը բարձր արագությամբ (օպտիկամանրաթելային կապուղով) պետք է մղվի դեպի համակարգի կենտրոնական սերվերային համակարգ:**

2. **Փակ ցանց.** Ցանցը բաղկացած է 61 տեղամասերում և 2 ԸԸՀ-ներում տեղադրված տեսախցիկներից, դրանց հիմնական մագիստրալային կապուղուն միացնող գծերից, հիմնական մագիստարալային կապուղուց, որի միջոցով բոլոր տեսահոսքերը ուղղվում են դեպի կենտրոնական սերվերային համակարգ:

3. **Կենտրոնական տեսագրման սերվերային համակարգ**. Համակարգը բաղկացած է **զուգահեռ 64 տեսահոսքի պահպանման հնարավորությամբ արագագործ մեկ սերվերից,** ինչպես նաև **մեկ լրացուցիչ՝ պահուստային սերվերից: Սերվերին** պետք է միացվեն հիմնական մագիստրալային կապուղուն արագագործ ցանցային բաշխիչներ, և պետք է ապահովվի **տեսագրման սերվերային** համակարգի անխափան սնուցումը:

4. **Առցանց հեռարձակում.** Կենտրոնական սերվերային համակարգից բոլոր տեսահոսքերը իրական ժամանակում պետք է **առցանց հեռարձակվեն CDN (Content delivery network) ցանցի միջոցով**, ինչը թույլ կտա օգտվողներին, Ինտերներտի միջոցով դիտել ցանկացած տեսախցիկի հեռարձակումը: Նման ծառայությունը կարող է պահանջել համապատասխան արտոնագրի ձեռքբերում, ինչը պետք է իրականացվի Կատարողի կողմից:

5. **Վեբ կայք.** Առցանց ուղիղ հեռարձակումը պետք է հասանելի լինի դրա համար նախատեսված հատուկ կայքի միջոցով: **Կայքը պետք է ունենա 2 տարբեր միջերես՝** Մեկը ըստ տեղամասի դիտման, երկրորդը՝ տվյալ ընտրատարածքի բոլոր տեղամասերի բոլոր հեռարձակումների միաժամանակյա դիտման հնարավորությամբ: Առաջին միջերեսը հասանելի պետք է լինի բոլոր օգտվողների համար, երկրորդը՝ միայն Պատվիրատուի կողմից ներկայացված IP հասցեներից:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2023 թվականի մարտի 25-ից մինչև մարտի 27-ը թվով 61 տեղամասերից տեսանկարահանումը, առցանց ուղիղ հեռարձակումն ու տեսագրությունների պահպանումն ապահովող համակարգի նախապատրաստում, կարգաբերում և անխափան աշխատանքի ապահովում՝ համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի:

2. 2023 թվականի մարտի 25-ից մինչև ապրիլի 16-ը թվով 2 ԸԸՀ-ների նիստերի և վերահաշվարկների տեսանկարահանումը, առցանց ուղիղ հեռարձակումն ու տեսագրությունների պահպանումն ապահովող համակարգի նախապատրաստում, կարգաբերում և անխափան աշխատանքի ապահովում՝ համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի:

3. Հատուկ վեբ կայքի միջոցով հանրությանը, ԿԸՀ-ին և նրա կողմից հաստատված հասցեատերերին տեսանկարահանվող տեղամասերում քվեարկության ամբողջ ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը հետևելու համար հասանելիության ապահովում:

4. Ընտրական տեղամասերում և ԸԸՀ-ներում իրականացված տեսանկարահանված նյութերի հասանելիություն Կատարողի համապատասխան կայքում (համակարգում) մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը՝ մինչև 2023թ. ապրիլի 2-ը, ժամը՝ 23:59-ը:

5. Ընտրություններից հետո Համակարգի բաղադրիչների ապամոնտաժում և վերադարձ՝

5.1. Պատվիրատուին՝ Պատվիրատուից ժամանակավոր և անհատույց օգտագործման իրավունքով ստացված սարքերը (տեսախցիկներ) և բաղադրիչները, ինչպես նաև արտոնագրերը՝ սեփականության իրավունքով:

5.2. ԿԸՀ-ին՝ ԿԸՀ-ից ժամանակավոր և անհատույց օգտագործման իրավունքով ստացված սարքերը (սերվերները), տեսախցիկների հիշողության քարտերը, ինչպես նաև արտաքին հիշողության սարքերի վրա ըստ ընտրատարածքների խմբավորված, տեղամասերի համարներով տեսագրությունները:

5.3. Այլ պետական մարմիններին կամ կազմակերպություններին՝ Պատվիրատուի միջնորդությամբ համապատասխան պետական մարմնից կամ կազմակերպությունից ժամանակավոր և անհատույց օգտագործման իրավունքով ստացված սարքերը (սերվերներ, տեսախցիկներ և այլն):

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

1. Անհրաժեշտ սարքավորումների և ծրագրային ապահովման տրամադրում՝ տեսագրումն ու ուղիղ հեռարձակումը կազմակերպելու համար:

2. Տեսանկարահանումն ու առցանց ուղիղ հեռարձակումն անխափան կազմակերպելու համար անհրաժեշտ Ինտերնետ և տվյալների փոխանցման կապուղիների տրամադրում:

3. Տեղամասերում և ԸԸՀ-ներում տեսախցիկների, հոսանքի ինժեկտորների և այլ անհրաժեշտ սարքերի տեղադրում:

4. Տեղամասերում և ԸԸՀ-ներում տեղադրվող և կենտրոնական սերվերային համակարգի բոլոր սարքերի կարգաբերում:

5. Կենտրոնական սերվերային կենտրոնի կազմակերպում:

6. Հանրությանը, ԿԸՀ-ին և նրա կողմից հաստատված հասցեատերերին տեսանկարահանվող տեղամասերում քվեարկության ամբողջ ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման, ինչպես նաև ԸԸՀ նիստերի և վերահաշվարկի գործընթացը հետևելու համար Հատուկ վեբ կայքի միջոցով հասանելիության ապահովում:

7. Կենտրոնական սերվերային կենտրոնի և թվով 61 տեղամասերում տեղադրված սարքերի ապամոնտաժում, փաթեթավորում և վերադարձ:

Տեխնիկական մանրամասներ

Կատարողը պետք է նախագծի, նախապատրաստի և իրականացնի ամբողջական համակարգ, որն ապահովում է 63 կետերից տեսահոսքի առցանց ուղիղ հեռարձակման և սերվերներում պահպանման հնարավորությունները:

Հեռարձակման և տեսագրման ժամանակը սահմանվում է հետևյալ կերպ.

- Թվով 2 ԸԸՀ-ներում հանրության համար շարունակական առցանց ուղիղ հեռարձակումը պետք է իրականացվի ԸԸՀ-ների նիստերի ժամանակացույցին համապատասխան: ԸԸՀ-ների նիստերի անցկացման օրվա և ժամի մասին ԿԸՀ-ն Կատարողին կիրազեկի նիստից առնվազն 2 ժամ առաջ:

- Թվով 61 տեղամասերից հանրության համար շարունակական առցանց ուղիղ հեռարձակումը պետք է սկսվի 26.03.2023թ. ՏԻՄ ընտրության քվեարկության օրվանից մեկ օր առաջ՝ 25.03.2023թ. ժամը 11:00-ին և շարունակվի մինչև քվեարկության հաջորդ օրը՝ 27.03.2023թ. ժամը 10:00-ն (ընդամենը 47 ժամ),

- Կենտրոնական սերվերների վրա տեսագրումը պետք է սկսվի 26.03.2023թ. ՏԻՄ ընտրության քվեարկության օրվանից մեկ օր առաջ ժամը 11:00-ին և շարունակվի մինչև քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 10:00-ն (ընդամենը 47 ժամ),

- Տեսախցիկների հիշողության քարտերի վրա տեսագրումը պետք է սկսվի 26.03.2023թ. ՏԻՄ ընտրության քվեարկության օրը՝ ժամը 6:00-ին և շարունակվի մինչև քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 10:00-ն (ընդամենը 28 ժամ):

- Կենտրոնական սերվերի վրա պետք է տեսագրվի նաև 2 ԸԸՀ-ների նիստերը և վերահաշվարկները:

- ԸԸՀ-ների վերահաշվարկի վիճակահանության և վերահաշվարկի աշխատանքների անցկացման օրվա և ժամի մասին ԿԸՀ-ն Կատարողին կիրազեկի առնվազն 2 ժամ առաջ:

Կատարողը պետք է ապահովի փաստաթղթում նկարագրված համակարգի բոլոր անհրաժեշտ բաղադրիչները (համակարգի կառուցվածք, նպատակներ, աշխատանքների շրջանակ, տեխնիկական մանրամասներ):

Կատարողը պետք է ստանա թվով 70 տեսախցիկ, 70 հոսանքի ինժեկտորներ և 2 հատ սերվեր, թվով 70 հիշողության քարտեր Պատվիրատուից և ԿԸՀ-ից:

Համակարգն ամբողջությամբ պետք է պատրաստ լինի շահագործման ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 5 օր առաջ: Ամբողջությամբ շահագործման պատրաստ կարգավիճակ ենթադրում է՝

- Թվով 63 տեսախցիկները կարգաբերված վիճակում տեղադրված տեղամասերում և ԸԸՀ-ներում,

- Կենտրոնական տեսագրման համակարգը աշխատող վիճակում է,

- Բոլոր հարկավոր կապերը հաստատված են, և բոլոր տեսախցիկները միացված են կենտրոնական տեսագրման համակարգին,

- Տեսախցիկների հիշողության քարտերը տեղադրված են թվով 63 տեսախցիկներում,

- Առցանց հեռարձակման CDN (Content delivery Network) բաղադրիչը գործարկված է և հանրային առցանց հեռարձակումը պատրաստ է շահագործման,

- Հատուկ վեբ կայքը պատրաստ է շահագործման:

Համակարգի սարքավորումներ և ծրագրային ապահովում

Առկա իրավիճակի գնահատման արդյունքում բացահայտվել է այն սարքավորումների և ծրագրային ապահովման ձեռքբերման պահանջը, որը հնարավորություն կտա գործարկել համակարգը: Կատարողը Պատվիրատուից (Պատվիրատուի միջնորդությամբ այլ պետականան մարմիններից) ժամանակավոր և անհատույց օգտագործման իրավունքով ստանում է հետևյալ սարքերը.

Հ	Ապրանք	Բնութագիր	Քանա

Հ			Կ
1	Տեսախցիկ	Avigilon H4SL-B01-IR	70
2	PoE հոսանքի ինժեկտորներ	Գիգաբիթ պորտ, ԵՄ ստանդարտներին համապատասխան վարդակ՝ համատեղելի է «Տեսախցիկի» հետ	70
3	Սերվեր	Server Avigilon HD NVR3 VAL 12TB EU 1U RACK	2
4	Հիշողության քարտ	MicroSD card 32GB	70

Տեսախցիկների տեղադրում և կարգաբերում

Կատարողը պետք է տեղադրի տեսախցիկներն ու հարակից սարքերը (PoE հոսանքի ինժեկտորներ) թվով 61 տեղամասերում և 2 ԸԸՀ-ներում:

Պատվիրատուն ներկայացնում է տեղամասերի հասցեների ցանկը մինչև 2023թ. մարտի 14-ը, որտեղ պետք է տեղադրվեն սարքավորումները: Կողմերը հաստատում են, որ այս վերջնաժամկետի պահպանումն էական նշանակություն ունի Կատասրողի կողմից ծառայությունները պատշաճ մատուցելու տեսանկյունից:

Ոչ ավել, քան 3 տեղամասերի տեղերը և հասցեները կարող են փոփոխվել և կտրամադրվեն Կատարողին: Փոփոխված տեղամասերի հասցեները Կատարողին պետք է փոխանցվեն փոփոխությունից հետո՝ 24 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան ծառայության մատուցման պահից 24 ժամ առաջ:

Կատարողը պետք է՝

1. տեղամասում տեսախցիկները տեղադրի քվեարկության սենյակում, պատին հետևյալ չափանիշներին համապատասխան՝

- Տեսախցիկը գտնվում է այնպիսի վայրում, որը հնարավոր կդարձնի ապահովել հաջորդ երկու կետերով նախատեսված չափանիշները
- Տեսախցիկի տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, տեխնիկական սարքվորումների միջոցով ընտրողների գրանցման, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ընտրողների գրանցման, քվեաթերթիկների և քվեարկության ծրարների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները,
- Տեսախցիկի տեսադաշտում պետք է լինեն նաև քվեախցիկները և տեսախցիկը պետք է ուղղված լինի քվեախցիկների դիմային հատվածին այն դիրքով, որ չխախտվի ընտրողների քվեարկության գաղտնիությունը:
- Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և տեղամասային կենտրոնի համարը:

2. ԸԸՀ-ներում տեսախցիկները տեղադրի ԸԸՀ-ների նիստերի սենյակում, պատին հետևյալ չափանիշներին համապատասխան՝

- Տեսախցիկի տեսադաշտում պետք է լինեն ԸԸՀ-ների նիստերը, վերահաշվարկի աշխատանքները, հանձնաժողովի առնվազն 3 անդամի կազմով վերահաշվարկ կատարելու դեպքում երկու կազմերի վերահաշվարկը՝ զուգահեռ:
- Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը:

Ցանցի և լայնաշերտ կապի տեղադրում

Կատարողը բոլոր՝ թվով 63 տեսախցիկների համար պետք է ապահովի ցանցային կապ, որը ապահովում է ընտրությունների ընթացքում կրկնակի տեսահոսք (384x216 հանրային հեռարձակման համար և 1920x1080 տեսագրման համար):

Կատարողը պետք է ապահովի լայնաշերտ կապի հասանելիություն.

- Ընտրատեղամասի և ԸԸՀ-ի վերջնակետից տվյալների փոխանցման թողունակությունը միջանկյալ կամ մագիստրալային ցանցի հանգույց պետք է լինի ոչ պակաս, քան 3 Մբիթ/վրկ (սիմետրիկ),
- Կենտրոնական տեսագրման համակարգի համար ֆիքսված ինտերնետ կապի ներբեռնման և վերբեռման արագությունը չպետք է լինի պակաս, քան 400 Մբիթ/վրկ:

Կատարողը պետք է հնարավորություն ունենա շտկելու կապի հետ կապված հնարավոր խնդիրները առավելագույնը 30 րոպեի ընթացքում՝ սկսած խնդիրը բացահայտելու պահից հեռարձակման և տեսագրման ամբողջ ժամանակահատվածում:

Համակարգի կարգաբերում և ներդրում

Կատարողը պետք է հիմնի կենտրոնական տեսագրման կենտրոն պահանջվող ժամանակահատվածում տեսագրությունների կենտրոնացված պահպանման գործընթացները իրականացնելու նպատակով: Տվյալների կենտրոնում պետք է լինեն տեսագրման սարքերը և բոլոր անհրաժեշտ բաղադրիչները բոլոր 63 տեսախցիկները Կատարողի կողմից ապահովված ցանցային ենթակառուցվածքի միջոցով փոխկապակցելու համար:

Կենտրոնական տեսագրման համակարգի համար հարկավոր բաղադրիչները պետք է ներառեն, բայց չսահմանափակվեն հետևյալ մասերով՝

1. CDN հարթակ, որը հասանելի է տվյալների կենտրոնի տարածքում և կարող է ապահովել հաշվարկված ծանրաբեռնվածությունը,
2. Մշտադիտարկման համակարգ,
3. Յուրաքանչյուր տեղամասից և ԸԸՀ-ից VPLS միացում դեպի NVR (Network video recorder) տեղակայման տիրույթ,
4. DHCP ծառայություն ինտերնետի հասանելիության, տեսախցիկների VPLS-ի համար,
5. Սերվերային պահարան (server rack), սվիչներ (switches) անխափան սնուցման սարք (UPS):

Կատարողը պետք է կարգաբերի համակարգի բաղադրիչները: Համակարգի բաղադրիչների կարգաբերումը ներառում է հետևյալը՝

1. Տեսախցիկների արտոնագրերի տեղադրում և կարգաբերում, որպեսզի ապահովվի տեսագրումն ու առցանց հեռարձակումը,
2. Արտոնագրերի տեղադրում սերվերների վրա,
3. CDN հարթակի ծրագրային ապահովման բաղադրիչների կարգաբերում՝ առցանց հեռարձակման հնարավորությունն ապահովելու նպատակով,
4. Տեսանկարահանման, առցանց ուղիղ հեռարձակման և տեսագրման ընթացքում համակարգի գործունեությունն ապահովելու նպատակով անվտանգության միջոցների տեղադրում և կարգաբերում:

Քվեարկության օրվանից հետո 7 օրվա ընթացքում Կատարողը տվյալների կենտրոնը պետք է պահի շահագործման ենթակա վիճակում: Այս ընթացքում Պատվիրատուի կողմից հայցման պարագայում Կատարողը պետք է նշված ընտրատեղամասի տեսագրությունները տրամադրի այն կառույցին, որը նշված կլինի հայտի մեջ:

Նշված՝ 7 օրյա ժամկետի ավարտից հետո Կատարողը ապամոնտաժման աշխատանքները պետք է իրականացնի միայն Պատվիրատուի կողմից համապատասխան ծանուցում ստանալուց հետո: Ծանուցման վերջնաժամկետ է ընտրությունների ավարտից հետո մինչև 15-օրյա ժամկետը: 15 օրյա ժամկետի ավարտից հետո Պատվիրատուի կողմից ապամոնտաժման ծանուցումը համարում է տրված:

Վեբ կայք

Կատարողը ուղիղ հեռարձակումը ցուցադրելու նպատակով պետք է մշակի հատուկ կայք և ապահովի դրա անխափան աշխատանքը: Կայքում պետք է լինի երկու տարբեր միջերես.

- **Էջ՝ լայն հասարակության համար**. Այս էջը պետք է ցուցադրի մեկ առանձին ընտրատեղամասի տեսագրությունը. Օգտվողը պետք է ունենա հնարավորություն ցանկից ընտրելու ցանկացած ընտրատարածք և ընտրատեղամաս, որտեղ տեղադրված է տեսախցիկ և տեսնելու ընտրված ընտրատեղամասի հեռարձակումը:

- **Էջ՝ ԿԸՀ-ի և քաղաքական կուսակցությունների (հատուկ օգտվողների) համար**. Էջը պետք է լինի պաշտպանված գաղտնաբառով և ապահովի հնարավորություն մեկ առանձին ընտրատարածքի բոլոր տեղամասերի ուղիղ հեռարձակումների:

- **Այս էջը պետք է հասանելի լինի միայն սահմանափակ թվով օգտվողների (կետերի) համար, որոնց թվում են.**
  - 6 կետ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար
  - 2 կետ ԸԸՀ-ների համար
  - 1 կետ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) համար: Պատվիրատուի կողմից սույն կետով նախատեսված օգտվողների թիվը կտրամադրվի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ (մինչև 19.03.2023թ.)
  - 2 կետ Կառավարության կենտրոնական շենքի համար
  - 1 կետ ՀՀ Դատախազության համար
  - 1 կետ ՀՀ Ոստիկանության համար
  - 1 կետ Ազգային անվտանգության ծառայության համար
  - 1 կետ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ- ի համար

Կայքի 2-րդ էջի գաղտնաբառերը օգտվողներին պետք է տրադրվեն քվեարկության օրվանից առնվազն 5 օր առաջ:

Սարքավորումների ապամոնտաժում

Պատվիրատուից ապամոնտաժման մասին ծանուցուն ստանալուց հետո ոչ ուշ, քան 6 շաբաթվա ընթացքում Կատարողը պետք է ապամոնտաժի բոլոր տեսախցիկները, ինժեկտորները, հիշողության քարտերը և սերվերները (սույն պայմանագրի շրջանակներում ձեռք բերված կամ ստացված մյուս ապրանքները), տեղադրի համապատասխան տուփերի (փաթեթների) մեջ և հանձնի Պատվիրատուին կամ համապատասխան պետական մարմնին այն գույքը, որը ենթակա է հանձնման համապատասխանաբար Պատվիրատուին կամ համապատասխան պետական մարմնին կամ կազմակերպություններին:Կատարողը պարտավոր է արխիվացնել տեսանկարահանված նյութերը և պահպանել այդ նյութերը ընտրական փաստաթղթերի պահպանման համար սահմանված կարգով: Կատարողը արխիվացված նյութերը հանձնում է նաև Պատվիրատուին արտաքին կրիչների միջոցներով:

Մոնիտորինգ, հաշվետվություններ, պատասխանատվություն

Պատվիրատուն կձևավորի Մոնիտորինգի թիմ՝ Պայմանագրում նշված բոլոր պրոցեսները վերահսկելու համար: Կատարողը օրվա կտրվածքով պետք է այդ թիմի ղեկավարին ներկայացնի հաշվետվություններ՝ որոնք կնկարագրեն աշխատանքների իրականացման առաջընթացը (տեղադրված տեսախցիկի քանակը, ձեռք բերված և առաքված սարքավորումները, ձևավորված համակարգը և այլն): Մոնիտորինգի թիմի կոնտակտները Կատարողին կտրամադրվեն լրացուցիչ ծանուցմամբ:

Կատարողը պատասխանատվություն չի կրում ֆորս մաժորային իրավիճակների, այդ թվում՝ հոսանքազրկման հետևանքով ծառայության խափանման և/կամ ոչ պատշաճ որակով մատուցման համար:

Վճարումներն իրականացնելու կարգը

Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը վճարում է Կատարողին՝ վերջինիս կողմից արխիվացված նյութերը և ապամոնտաժված սարքավորումները Պատվիրատուին հանձնելուց հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	Յուքոմ ՓԲԸ
Ք.Երևան, Կառավարական տուն 1	Ք,Երևան, Դավիթ Անհաղթի 8/4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011042679	Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ՝ 00024873
.....	.....
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 2
«20» 03 2023թ. կնքված
ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-23/49 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72311240/2	Տվյալների փոխանցման ծառայություններ՝ համաձայն Աղյուսակ 1-ի	-	-	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560	48 068 560

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*
*** Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը վճարում է Կատարողին՝ վերջինիս կողմից արխիվացված նյութերը և ապամոնտաժված սարքավորումները Պատվիրատուին հանձնելուց հետո:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042679
ՀՎՀՀ 02505554

Կ.Տ. ..... /ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
Յուքոմ ՓԲԸ
Ք,Երևան, Դավիթ Անհաղթի 8/4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570043102134100
ՀՎՀՀ՝00024873

Կ.Տ. ..... /ստորագրություն/

Հավելված 3
« 20 » 03 2023թ. կնքված
ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-23/49 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 20 » 03 2023թ. կնքված
ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-23/49 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն